

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱՇԱՐԻՆ

(հարցաշար՝ հասարակական կազմակերպությունների և լայն շրջանակների համար)

Պատասխանող՝ Հերիքնագ Տիգրանյան (Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, իրավախորհրդատու)

1. Խոշորացման գործընթացի վերաբերյալ ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը: Ձեր կարծիքով՝ կարող է այն լուրջ հիմքեր ստեղծել տեղական ինքնակառավարման համակարգի և տարածքների հետագա զարգացման համար:

Մեր ընկալմամբ ՏԻ համակարգի զարգացումը ենթադրում է «առանձին բնակավայր իր ինքնակառավարմամբ» սխեման: Դրանից շեղումը բերում է ոչ թե զարգացման, այլ ընդամենը ժամանակավոր խնդիրների լուծման (լուծմանփորձերի):

Հարուստ երկրի դեպքում նման հարց ուղղակի չպետք է դրվեր, իսկ աղքատությունից առաջացած խնդիրներից դրդված ինչ լուծում էլ առաջարկվի՝ այն կունենա հենց ժամանակավոր բնույթ:

Ամեն մի առանձին բնակավայր առանձին միավոր է հենց աշխարհագրորեն, և նրանից մի քանի կմ հեռու գտնվող ու այլ տնտեսություն ու հետաքրքրություններ ունեցող մեկ այլ բնակավայրի կցումը պետք է համապատասխանի ընդհանուր աշխարհագրական բնութագրին: Համայնքների խոշորացումը ենթադրում է իշխանության և ծառայությունների հեռացում բնակչությունից, հաղորդակցման խնդիրների առկայություն և այլն, ուստի խոշորացման ծրագիրը հնարավոր կլինի ռականացնել հետևյալ անհրաժեշտ պայմանների ապահովման դեպքում միայն .

- Ծառայությունների հասանելիության երաշխավորում
- Ներհամայնքային/միջհամայնքային կանոնավոր տրանսպորտային հաղորդակցություն՝ պետական բյուջեի հաշվին
- Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում

2. Առաջարկվում է խոշորացման երկու մոդել՝ «փնջային» և «շրջանային»: Ծանո՞թ եք այս մոդելներին, դրանցից որն էք առավել արդյունավետ համարում մեր երկրի դեպքում:

Մասնագիտական կարծիք հայտնել չենք կարող:

3. Ի՞նչ կարելու որոշումներ են տեսնում գործընթացն իրականացնելիս եւ ի՞նչ քայլերով է հնարավոր դրանք չեզոքացնել:

Համայնքների խոշորացման դեպքում հնարավոր որոշումներ են համարում տեղական իշխանությունների հետագումը բնակչությունից, ծառայությունների անհասանելիությունը, տրանսպորտային հաղորդակցման դժվարությունները, փոքր համայնքների կարողությունների փոշիացումը, սահմանամերձ համայնքների թուլացումը: Այս որոշումների չեզոքացման քայլերը՝ տես հարց 1-ի պատասխանը:

4. Առաջարկվող մոդելներով արդյոք արդյունավետ մեխանիզմներ ստեղծված են տեղական իշխանությունների օտարումը բնակչությունից բացառելու համար: Ի՞նչ նոր մեխանիզմներ կմատնանշեք բնակչություն-տեղական իշխանություն կապը արդյունավետ դարձնելու համար:

Առաջարկվող մոդելների վերաբերյալ առավել հիմնավորված և մասնագիտական կարծիք կարող են հայտնել ոլորտի մասնագետները:

Ինչ վերաբերում է տեղական իշխանություն-բնակչություն կապին, ապա, վստահաբար, կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը և բնակչության ուսուցումը կնպաստի դրա արդյունավետության բարձրացմանը:

5. Արդյո՞ք տեղական հանրաքվեների արդյունքները պետք է որոշիչ լինեն այն դեպքում, երբ Սահմանադրության մեջ վերապահում է կատարված այդ մասով:

Գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի ձևակերպումը անհրաժեշտ է վերանայել հիշյալ վերապահումը բացառելու իմաստով: Այլապես սահմանափակվում է ժողովրդի կողմից իր իշխանությունը հանրաքվեի միջոցով իրականացնելու իրավունքը, և ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը դառնում է հոչակագրային նորմ:

6. Ձեր կարծիքով՝ բարեփոխումները կարո՞ղ են նպաստել առավել արդյունավետ, գործունե և կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու, ձևավորման համար:

Գործունե ավագանի ունենալը չենք կարծում, թե պայմանավորված է համայնքների խոշորացումով: Խնդիրը իրազեկման, իրավական գրագիտության բարձրացման մեջ է:

7. Ի՞նչ կարծիքի եք բնակավայրերի ընդհանուր ժողովի գաղափարի, համայնքի ղեկավարի ընտրության եղանակների (ուղղակի, թե անուղղակի) մասին:

Գաղափարին և մեխանիզմներին լավատեղյակ չենք, ուստի, մասնագիտական կարծիք հայտնել չենք կարող: Սակայն համայնքի ղեկավարի ընտրության հարցում միանշանակ պաշտպանում ենք ուղղակի՝ համայնքի բնակիչների կողմից անմիջականորեն ընտրվելու համակարգը՝ վերընտրման իրավունքի սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 անգամ:

8. Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ առաջնահերթ քայլեր պետք է իրականացնի գործընթացի պատասխանատու մարմինը՝ բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար:

Անհրաժեշտ ենք համարում տարբեր լսարանների հետ հանդիպում-քննարկումները, այդ թվում՝ բոլոր համայնքի բնակիչների, ՀԿ սեկտորի, ոլորտի մասնագետների հետ, ինչպես նաև իրազեկման և գաղափարի հիմնավորման աշխատանքները: Կարևորում ենք այդ հանդիպումների և դրանց արդյունքների մասին լուսաբանումները, կարծիքների կամ դիրքորոշումների on-line հրապարակայնացումը: Գտնում ենք, որ խոշորացման վերաբերյալ որոշումները պետք է ընդունել միայն հանդիպումների արդյունքների բազմակողմանի վերլուծության և ամփոփման հիման վրա՝ հանրության կարծիքը հաշվի առնելով:

9. Ինչպիսի՞ն են Ձեր առաջարկությունները հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

Տես կետ՝ 9

10. Արդյո՞ք այսօր երկիրը պատրաստ է նման բարեփոխումների եւ եթե այո, դրանց իրականացման ինչպիսի՞ ժամկետներ և եղանակներ (փուլային, միաժամանակյա և այլն) կառաջարկեիք:

Կարծում ենք սա օրախնդիր չէ մեր երկրի համար: Տեղական ինքնակառավարման համակարգը մարզ-համայնք սխեմայով, դեռևս նոր է սկսել գործարկվել և զարգանալ: Առաջարկվող նոր մեխանիզմը և դրա արդյունավետությունը ընկալման և հիմնավորման կարիք ունի: Մինչդեռ, համայնքի բնակիչն այսօր օրախնդիր է համարում սոցիալ-տնտեսական բարեփոխումները, քան կառավարման-կազմակերպական համակարգի փոփոխությունները: Միաժամանակ, հարկ է նկատել, որ այսօր գործող ՏԻՄ-երի պարագայում անգամ համայնքի բնակիչները հիմնականում անտեղյակ են իրենց

իրավունքներին և ՏԻՄ լիազորություններին, հետևաբար լիարժեքորեն չեն իրացնում իրենց
իրավունքները: